2.1. Բազմապատկումով պարզ խնդիրներ

Երեխայի հետ զբաղվողին

1. Տատիկը 6 ափսեի մեջ 5-ական կտոր խմորեղեն դրեց: Քանի՞ կտոր խմորեղեն էր:

Քանի՞ ափսեի մեջ դրեց: Ամեն ափսեի մեջ քանի՞ կտոր խմորեղեն դրեց: Մեկում 5 կտոր, երկրորդում էլ 5 կտոր: Ինչքա՞ն եղավ: 10: Իսկ երեք ափսեում քանի՞սը կլինի: Ճիշտ է, 5-ով ավելի՝ 15 կամ 3 հատ 5 կտոր: Ուրեմն 6 ափսեում 6 հատ 5 կտոր կստացվի: Ընդամենը **30 կտոր** խմորեղեն էր:

Հուշում

Եթե երեխան այապիսի բայապրրությունը չհասկանա, կարող եվ նկարելով օգնել:

Իրադրությունը երեխային բայապրելիս կարելի է շատ բան կոնկրետացնել: Խնդիրը կամ չարաչվող դրվագը մանր առարկաներով մոդելավորել:

2. Մեքենագրուհին 1 ժամում 7 էջ է մուտքագրում: Նա 4 ժամում քանի՞ էջ կմուտքագրի:

Ենթադրենք **1** ժամում ☐ է մուտքագրում, ապա

4 ժամում կմուտքագրի **4** այդքան՝

☐ ☐ ☐ ☐

Մի ժամում 7 էջ է մուտքագրում, ուրեմն 4 ժամում (4 անգամ շատ ժամանակում) դրանից 4 անգամ ավելի կմուտքագրի՝ **28 էջ** (4 x 7 = 28):

Հուշում

Դժվարանալու դեպքում կարելի է 4 x 7-ը գումարելով հաշվել:

Արի խնդիր լուծենք

1.

Նկարին նայելով հաշվիր՝ 8 բայդարկայում քանի՛ թիավարող կա։

2.



Նկարին նայելով հաշ-
վիր՝ Անին ինչքա՛ն փող
ունի։

Պատասխանը՝ 320 դրամ։

Պատասխանը՝ 35։

3. Մառանում 10 տակառ կա, ամեն մեկում՝ 100 լ գինի: Քանի՞ հազար լիտր գինի կա մառանում:

Հուշում

Եթե չպատկերացնես, կարող ես նկարել ու հաշվել: Օրինակ այսպես՝

100	100	100	100	100
100	100	100	100	100

Պատասխանը՝ 1 հազար լիտր:

Ազատ նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստա՛տ կլուծես:)

1. Վագոնում 4 կուպե կա, ամեն մեկում՝ 4 տեղ: Վագոնում քանի՞ տեղ կա:

2. Հայրս 2 արկղ տանձ գնեց, յուրաքանչյուրում՝ 9 կգ: Նա քանի՞ կիլոգրամ տանձ գնեց:

3. Մեր այգում 4 շարքով նոր ծիրանենիներ տնկեցինք, ամեն շարքում՝ 7 ծիրանենի: Քանի՞ ծիրանենի տնկեցինք:

4. Եթե մի տետրը 3 դրամ արժե, նման 7 տետրի համար ինչքա՞ն պիտի վճարեմ:

5. Ծննդյան օրվա առիթով 2 արկղ միրգ օգտագործվեց, յուրաքանչյուրում՝ 5 կգ: Ընդամենը քանի՞ կիլոգրամ միրգ օգտագործվեց:

6. Մայրիկիս հետ ծիրանի հյութ պատրաստեցինք և 5 հատ 3լ-անոց ամանները լցրինք: Կարո՞ղ ես ասել՝ ինչքա՛ն ծիրանի հյութ պատրաստեցինք:

7. Խանութում 4 արկղ մթերք կա, յուրաքանչյուրում՝ 6 կգ: Խանութում ընդամենը քանի՞ կիլոգրամ մթերք կա:

8. Մեր դասարանի բոլոր անկյուններում 5-ական ծաղիկ ենք աճեցնում: Դասարանում քանի՞ ծաղիկ ենք աճեցնում:

9. Մանկապարտեզը 3 դույլ կաթ ստացավ, յուրաքանչյուրում՝ 6լ: Մանկապարտեզն ընդամենը որքա՞ն կաթ ստացավ:

10. Մեր պատուհանների տակ 3 վարդի թուփ ունենք, որոնցից յուրաքանչյուրի վրա 9 վարդ է բացվել: Մեր պատուհանների տակ քանի՞ վարդ է բացվել:

11. Արմինեն 9 հատ 10-դրամանոց ունի: Արմինեն ինչքա՞ն փող ունի:

12. Երեխաներն 8 շարք խնձորենի տնկեցին, յուրաքանչյուրում՝ 9-ական խնձորենի: Քանի՞ խնձորենի տնկեցին:

13. Ծննդյանս օրն ընկերներիցս 3 տուփ գունավոր մատիտ ստացա: Ամեն տուփում 12 մատիտ կար: Կարո՞ղ ես ասել՝ քանի՛ մատիտ ստացա:

14. 1 կգ սալորը 60 դրամ արժե: 4 կգ սալորի համար ինչքա՞ն վճարեմ:

15. Մի զգեստը 20 դոլար արժե: Նման 7 զգեստի համար ինչքա՞ն պետք է վճարել:

16. Մեկ կիվին 60 դրամ արժե: 6 կիվիի համար որքա՞ն պետք է վճարես:

17. Իմ բոլոր գրքերը 4 դարակում դասավորեցի՝ ամեն դարակում 15-ը դնելով: Քանի՞ գիրք ունեմ: